

Պաշտոնական ընդդիմախոս
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր
ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ
Կարծիքը
ԱՇՈՏ ՎՈԼՈՂՑԱՅԻ ԳԱԼՍՑԱՆԻ
«Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն
(19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.)» ատենախոսության

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը համընդգրկուն մի աշխատանք է, որի հեղինակը մանրակրկիտ և համակողմանի քննության է ենթարկել արևելահայ գեղարվեստական վավերագրական լեզուն (19-րդ դարի 60-ական թվականներից մինչև 21-րդ դարի 10-ական թվականները): Շուրջ մեկուկեսդարյա ժամանակահատված ընդգրկող այդ ժամանակաշրջանի լեզվի զարգացման ընթացքը, կանոնարկման խնդիրները եղել են հեղինակի ուշադրության կենտրոնում:

Ավելի քան 400 էջից բաղկացած սույն ծավալուն ատենախոսությունը, ինչպես և ակնկալելի էր, նախ դիտարկում է արևելահայ գեղարվեստական վավերագրության ձևավորման և զարգացման ընթացքը:

Ատենախոսության առաջին գլուխը սկսվում է սկզբնաղբյուրների և գրականության տեսության դիտարկմամբ: Ինչպես և ակնկալելի էր, Աշոտ Գալստյանը նախ քննության առարկա է դարձնում ինչպես աշխարհաբարի զարգացման, այնպես էլ գեղարվեստական վավերագրության ժանրի լեզվական արտահայտության հարցերը:

Հետևողական և ամբողջական դիտարկման է ենթարկվում *գրական լեզու* խնդիրը: Բնականաբար, չի անտեսվում լեզվական անհատականության խնդիրը:

Ընդհանրապես, ինչպես առաջին գլխում, այնպես էլ ամբողջ աշխատանքում հստակորեն ներկայացվում են հեղինակի դիտարկումները: Հատկապես ուզում ենք շեշտել, որ սույն ատենախոսության մեջ քննության առարկա դարձած աշխատությունները հսկայական ծավալ են կազմում:

Ատենախոսության երկրորդ գլուխը ներկայացնում է գեղարվեստական վավերագրության լեզվական իրողությունների կառուցվածքային տիպերը: Հատկապես գնահատելի է «Բնանկարը և դիմանկարը գեղարվեստական վավերագրության մեջ» բաժինը:

Այդ բաժնում դիտարկվում են նկարագրական խոսքի ոճական դրսևորումները:

Լեզվական հարուստ նյութ է պարունակում ատենախոսության երրորդ գլուխը, որը նվիրված է գեղարվեստական վավերագրության բառային միավորների քննությանը: Աշխատանքի այս հատվածում հաջորդաբար դիտարկվում են գեղարվեստական երկերի բնագրային բառաշերտերը:

Բնականաբար, նախ քննության առարկա են դարձել գրաբարյան բառերը, այնուհետև դիտարկվել են բարբառային և ժողովրդախոսակցական բառերը: Կարծում ենք, արևելահայերենի ենթաբաժինը կարիք ունի ավելի լայն և ընդգրկուն դիտարկման: Արևմտահայերենի բաժնում լավ կլիներ, եթե խոսքային մակարդակով դիտարկվեր Վահրամ Փափազյանի լեզուն, որը յուրահատուկ միահյուսել է մեր երկու գրականների բառամթերքը: Ճիշտ է, Աշոտ Գալստյանը օրինակներ բերում է Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք»-ից, սակայն եթե նկատի առնենք, որ Վահրամ Փափազյանը յուրահատուկ համաձուլում է կատարել արևելահայ և արևմտահայ գրականների ոչ միայն բառապաշարային, այլև լեզվաքերականական ոլորտների, ցանկությունը դառնում է հիմնավոր: Կարծում ենք՝ ապագայում հեղինակը թերևս կանդրադառնա փափազյանական լեզվի տիպաբանական առանձնահատկություններին:

Առանձնապես գնահատելի է ատենախոսության գեղարվեստավավերագրական բնագրերի բառապաշարի բառակազմի կադապարների քննությունը (տե՛ս ատենախոսություն, էջ 214-256):

Այս դեպքում ևս ունենք ոչ այնքան դիտողություն, որքան ցանկություն: Մեր կարծիքով, ատենախոսության մեջ պակասում է վիճակագրական ընդգրկուն քննությունը: Ատենախոսության մեջ կարելի էր կիրառել նորագույն լեզվավիճակագրական մեթոդները: Նման փորձ հայերենագիտության մեջ առաջին անգամ կիրառել է ակադ. Գ. Ջահուկյանը: Նման վիճակագրական մեթոդների կիրառմամբ կարելի է

պարզել արևելահայ և արևմտահայ գրական լեզուների սերտության աստիճանը և այլն:

Աշխատանքում մեծ տեղ է տրվում գեղարվեստական վավերագրության քերականական առանձնահատկությունների քննությանը (գլուխ 4, էջ 257-352):

Շուրջ 100 էջ ծավալով այս գլխում ատենախոսը քննում է նախ ձևաբանական առանձնահատկությունները, ապա անդրադառնում է շարահյուսական առանձնահատկություններին (էջ 337-355):

Անտարակույս, գնահատելի է հեղինակի կատարած մանրակրկիտ քննությունը, խոսքի մասերի կիրառության առանձնահատկությունների դիտարկումը և այլն:

Ինչպես այս բաժնում, այնպես էլ պաշտպանության ներկայացված սույն ատենախոսության մեջ Աշոտ Գալստյանը ի հայտ է բերում բանասիրական գիտությունների դոկտորի բոլոր տվյալները:

Ատենախոսության հինգերորդ գլուխը նվիրված է գեղարվեստական վավերագրության բնագրերի պատկերավորման-արտահայտչական համակարգի քննությանը (տե՛ս էջ 353-417):

Սեղմ շարադրանքով, բայց հիմնավորապես դիտարկվում են գեղարվեստական վավերագրության հեղինակների լեզվի կերպարային-ոճական դրսևորումները:

Առանձնապես հետևողական քննության է ենթարկվել համեմատությունը որպես պատկերավորման միջոց:

Ատենախոսության հինգերորդ գլխում դիտարկված հարցերից առանձնապես նշենք «Շրջասությունը պատկերավորման միջոց» ենթաբաժինը (էջ 369-377): Այս ենթաբաժնում հեղինակի դիտարկումները ոչ միայն անառարկելի են, այլև որոշակի նորություն են պարունակում:

Պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը վկայում է, որ հեղինակը տքնաջան աշխատանք է կատարել, բարեխիղճ գիտական մոտեցմամբ դիտարկել ցանկացած հարցի շուրջ առկա կարծիքներն ու պատկերացումները և ներկայացրել իր կողմից տրվող հստակ բնութագրումներով: Որպես օրինակ կարելի է բերել ատենախոսության 5-րդ գլխի այն հատվածը, որը նվիրված է բանավոր խոսքին և առած-ասացվածքներին: «Հայտնի է,- գրում է Աշոտ Գալստյանը,- որ լեզվաբանների մի մասը հակված է դրանք դարձվածք համարել՝ պնդումով, որ առածներն ու

ասացվածքները պատրաստի կայուն միավորներ են և մեծ չափով մոտենում են դարձվածքներին...» (ն.տ., էջ 366): Իսկ ի՞նչ է կարծում ատենախոսը: Նա գրում է. «Մենք կարծում ենք, որ չնայած թևավոր խոսքերն (նաև առած-ասածվածքները) ու դարձվածքներն ունեն ընդհանուր գծեր, սակայն մի քանի հատկանիշներով տարբերվում են միմյանցից (տե՛ս ն.տ.):

Ի՞նչ տարբերակիչ հատկանիշ է շեշտում հեղինակը. «թևավոր խոսքերի ծագման աղբյուրի հայտնի լինելը, մինչդեռ «դարձվածքների ծագումը մեծավ մասամբ անհայտ է» (ն.տ., էջ 366):

Միանգամայն համոզիչ է ատենախոսության հեղինակի սույն դիտարկումն ու արտահայտած կարծիքը:

Այսպես յուրաքանչյուր հարցադրում և խնդիր իր ըստ հնարավորին սպառիչ պատասխանն է գտնում սույն ատենախոսության մեջ: Դա վկայում է ատենախոսության հեղինակի երկար և տքնաջան գիտական աշխատանքի մասին:

Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվի արտահայտչական միջոցների քննության ենթաբաժնում (5.3) հատկապես նորությամբ է բնութագրվում «կրկնությունը արտահայտչական միջոց» հաստվածը:

Այս ենթաբաժնում դիտարկվում են ոչ միայն բանահյուսական ժանրատեսակները, այլև ոճական կադապարներ:

Վերստին ցանկանում ենք շեշտել, որ նման վերլուծությունների ժամանակ վիճակագրական ճշգրիտ մեթոդներով ստացված տվյալները խիստ անհրաժեշտ են: Այդ միջոցով ոչ թե սոսկ այս կամ այն լեզվական ձևի առկայությունն է ներկայացվում, այլև լեզվում ունեցած *տեսակարար կշիռը*:

Քանի որ խոսք բացվեց ցանկության մասին, նշենք, որ թեև ամբողջ ատենախոսությունը գրված է օրինակելի հայերենով, առանց անհարկի փոխառությունների, այդուհանդերձ հանդիպում են նաև մի քանի նման բառաձևեր (հմմտ., օրինակ՝ *ինտելեկտուալ, կանոնիկ, հումորեսկ* և այլն): Չենք խոսում հինգերորդ գլխի 3-րդ ենթաբաժնում ներկայացված *անեկդոտ* փոխառյալ ձևի մասին: Կարծում ենք, սակայն, որ ատենախոսը կարող էր անդրադառնալ արևմտահայերենում կիրառվող *մանրավեպ* բառին: Ըստ գրական արևմտահայերենի կանոնական բառարանների (հմմտ. Անդրանիկ Կռանյանի «Գործնական բառարան հայերեն լեզվի»)՝ անեկդոտի

հայերեն ներկայացված ձևն է՝ *հաճելի դրվագ-մանրավեպ...*): Ամեն պարագայի, գործ ունենք վիճելի տարբերակի հետ: Փոխառյալ ձևերի և դրանց արևմտահայ «տարբերակներին», կարծում ենք, արժեր անդրադառնալ...

Հինգերորդ գլխի դիտարկած հարցերից հատկապես ցանկանում ենք ընդգծել ոճական կաղապարների քննության հատվածը: Վերստին ուզում ենք արտահայտել մեր ցանկությունը – ոճական կաղապարների ըստ էության ավելի հանգամանալից քննության պահանջը:

Հայցորդի լեզուն օրինակելի է: Այն ավելի աչքի է ընկնում լեզվի մաքրությամբ, միևնույն ժամանակ ինքնատիպ բառաձևերով, *գունեքանգ, քաջաբերել, բնագրաստեղծ, լեզվատիրույթ* և այլն (հմմտ., օրինակ, էջ 395 և այլն):

Ինչպես և ակնկալելի էր, Աշոտ Գալստյանը ատենախոսության վերջում ներկայացրել է իր կողմից օգտագործված գրականության ցանկը: Ցանկը ինքնին ապացույց է, թե ինչ տարողունակ աշխատանք է կատարել հեղինակը:

Նշված և տակավին չնշված մի շարք իրողություններ մեզ հիմք են տալիս պնդելու, որ «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դարի 10-ական թթ.)» ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Այդուհանդերձ, ցանկանում ենք անել, մի քանի, իրոք, մանր դիտողություններ, որ կարելի է համարել նաև ցանկություններ, որոնք հեղինակը թերևս հաշվի առնի իր հետագա աշխատանքներում:

Շարահյուսության բաժնում ցանկալի էր, որ հեղինակը նորագույն մեթոդների կիրառմամբ հանգամանալից դիտարկեր թեմա-ռեմա հարցը:

Ինչպես երևում է օգտագործված գրականության ցանկից, ատենախոսի կողմից կարծես թե չեն դիտարկվել Սամվել Անթոսյանի, Գևորգ Բաղդիշյանի, Երվանդ Մելքոնյանի, Ռոբերտ Թոխմախյանի, Հովհաննես Զաքարյանի և այլոց (ցուցակը կարելի է շարունակել) աշխատությունները:

Միանգամայն ընդունելի է հեղինակի հետևյալ եզրակացությունը. «Կարելի է անվարան եզրակացնել, որ առաջադիր ժամանակաշրջանի գեղարվեստական վավերագրությունը՝ իբրև լեզվական իրողություն, արևմտահայ գեղարվեստական ժառանգության վիրթուսարի արտահայտություն է» (տե՛ս, ն.տ., էջ 407):

Նմանապես համոզիչ է հետևյալ եզրահանգումը. «Գեղարվեստավարական» ժանրը իր ընդհանրության մեջ ունի լեզվակառուցման իրողությունների միասնական համակարգ» (ն.տ., էջ 404):

Ճիշտ է նկատում Աշոտ Գալստյանը, որ քննության ենթակա շրջանի «գեղարվեստական վավերագրության մեջ տարբեր լեզվական կազմություններ գոյություն են ունեցել կողք կողքի (բարբառ, ժողովրդախոսակցական լեզու, գրական լեզու)» (տե՛ս, ն.տ., էջ 405):

Թերևս արժեք ավելացնել նշված շարքում *գրական* և *խոսակցական արևմտահայերենը*:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ «գեղարվեստական վավերագրության լեզվում առավել շատ են գործածվում ասացական բայերը...»: Ա. Գալստյանը համոզիչ կերպով նշում է, որ դրանք «ըստ էության ժանրի բնութագրական ցուցիչներն են»:

Եզրահանգումների շարքում առկա է հետևյալ ձևակերպումը. «20-րդ դարի գեղարվեստական վավերագրության հեղինակները բնորդների տիպականությունը պահպանելու հստակ նշանակությամբ իրենց երկերում տեղ են տվել արևմտահայերենի որոշ գոյաձևերի» (տ. Ն.տ., էջ 406): Ահա հենց այդ առումով բավական հարուստ լեզվական նյութ կարող էր տալ Վահրամ Փափազյանի լեզվի տիպաբանական քննությունը:

Անտարակույս, դիտարկված որոշ բառամիավորներ կարող են համալրել կիրարկության մեջ գտնվող բառարանները և, ինչպես հեղինակն է նշում. «հրապարակի վրա եղած ուսումնական բառաշարքերը» (ն.տ., էջ 407):

Սույն աշխատության արդյունքները հաջողությամբ կիրառելի են ինչպես ուսումնական գործընթացներում, այնպես էլ տարբեր գիտաճյուղերում: Համոզիչ ենք համարում հեղինակի այն եզրահանգումը, որ «նման աշխատանքներ կարող են գրվել գիտության տարբեր բնագավառներին վերաբերող թեմաներով...» (ն.տ.): Հեղինակը նշում է, որպես օրինակ, հրապարակախոսության լեզուն, նամակների լեզուն և այլն:

Վերստին բարձր գնահատելով հանդերձ պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը, հարկ ենք համարում անել որոշ ցանկություն-դիտողություններ:


Ցանկալի էր, որ աշխատանքում ներկայացվեր նաև *արևելահայերեն-արևմտահայերեն-բարբառ* զուգադրական քննություն՝ վիճակագրական որոշակի արդյունքների հիման վրա:

Փաստորեն, հեղինակը քննել է մեկուկեսդարյա լեզվական վիճակը: Հետաքրքիր էր դիտարկել քննության ենթակա ժամանակահատվածում մեր երկու գրական լեզուների փոխներթափանցումների, զարգացման ուղղվածության ճշգրտման և հարակից հարցերը: Ուզում ենք հավատալ, որ հեղինակը կշարունակի իր գիտահետազոտական աշխատանքը տվյալ բնագավառում, թեև ներկա տվյալներով Աշոտ Գալստյանը արդեն հրատարակել է երեք տասնյակ հոդվածներ և «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դարի 10-ական թթ.)» երկհատոր մենագրությունը:

Սույն ատենախոսության սեղմագիրը արտացոլում է պաշտպանության ներկայացված ներկա աշխատության բովանդակությունը:

Աշոտ Վոլոդյայի Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դարի 10-ական թթ.)» դոկտորական ատենախոսությունը վկայում է, որ գործ ունենք քաջահմուտ լեզվաբանի հետ: Մեր կողմից արված դիտողությունները իրականում կարելի է դիտել իբրև ցանկություններ: Ուստի միջնորդում ենք ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝ Աշոտ Վոլոդյայի Գալստյանին բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհելու համար:

Արտեմ Սարգսյան



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գտությունների դոկտոր, պրոֆեսոր

12.06.2021 թ.